

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«23» մայիսի 2007թ.

Թիվ 34 / 116

ք.Ստեփանակերտ

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՆԻՔԻ  
ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը *որոշում է.*

*(նախաքանը փոփ. 28.01.2015 N 53-Ն)*

1. Հաստատել տարածքային ընտրական հանձնաժողովի կնիքի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ տարածքային ընտրական հանձնաժողովի կնիքը կլոր է, 40 մմ տրամագծով, կնիքի եզրագծով նշված են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը, իսկ ներսի շրջագծում՝ տարածքային ընտրական հանձնաժողովի անվանումը, կենտրոնում պատկերված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինանշանը:

3. Ուժը կորցրած ճանաչել ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2005թ. փետրվարի 25-ի «Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կնիքի ձևը հաստատելու մասին» թիվ 3/8 որոշումը:

**ԼՂՀ կենտրոնական ընտրական  
հանձնաժողովի նախագահ՝**

**Ս. Նասիրյան**



Ներսի շրջագծում`

- 1) Ստեփանակերտի տարածքային ընտրական հանձնաժողով
- 2) Ասկերանի տարածքային ընտրական հանձնաժողով
- 3) Հաղուրթի տարածքային ընտրական հանձնաժողով
- 4) Մարտունու տարածքային ընտրական հանձնաժողով
- 5) Մարտակերտի տարածքային ընտրական հանձնաժողով
- 6) Շահումյանի տարածքային ընտրական հանձնաժողով
- 7) Շուշիի տարածքային ընտրական հանձնաժողով
- 8) Քաշաթաղի տարածքային ընտրական հանձնաժողով

ԼՂՀ կենտրոնական ընտրական  
հանձնաժողովի քարտուղար`

Ռ. Նազարյան